Հաստատված է
Իջևան համայնքի ղեկավարի
« 21 » հուլիսի 2025թ-ի **N 895** որոշմամբ

ՀԱՅՏ
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ

1	**Առաջարկի հեղինակի անուն,ազգանուն /անվանում/**	Դիանա Մելիքյան
2	**Կոնտակտային տվյալներ** /հասցե, հեռախոս, էլ.փոստ/	Տավուշի մարզ ,գյուղ Աճարկուտ, 1 փ 34 բն +374 93-45-17-37 diana.melikyan8@gmail.com
3	**Առաջարկի անվանումը, նկարագրությունը**	«Աճարկուտի մշակութային պատկերը» Տարածքի ընտրություն. Աճարկուտ գյուղի կենտրոնական հատվածում գտնվող երկար պատը նախատեսվում է վերածել համայնքի մշակութային ժառանգության ներկայացման յուրօրինակ հարթակի։ Առաջարկի նկարագրություն .Նախատեսվում է պատի վրա պատկերել Աճարկուտ գյուղի պատմամշակույթային ժառանգության պատկերները՝ Սրանոցի կամուրջը, Կիրանցի վանքը, Դեղձնուտի վանքը և Սամսոնի վանքը։ Յուրաքանչյուր պատկերի կողքին կտեղադրվի հակիրճ եռալեզու (հայերեն,անգլերեն,ֆրանսերեն)տեղեկատվություն

		տվյալ հուշարձանի մասին՝ թույլ տալով բնակիչներին ու այցելուներին ավելի լավ ճանաչել գյուղի պատմությունն ու մշակութային հարստությունը։ Նախագիծը միաժամանակ կունենա գեղագիտական, կրթական և զբոսաշրջային նշանակություն. պատը ոչ միայն կզարդարի գյուղի կենտրոնը, այլև կդառնա գիտելիքի ու համայնքային ինքնության ամրապնդման տարածք։
4	**Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկը**	Աճարկուտ գյուղը երկար տարիներ ունեցել է անբավարար ճանապարհային ենթակառուցվածքներ, ինչի պատճառով շատերը տեղյակ չեն եղել գյուղի գոյության մասին և չեն այցելել։ Սակայն վերջին տարիներին, Կիրանցի սահմանային ճանապարհների բարեկարգման հետ մեկտեղ, նաև Աճարկուտի ճանապարհները վերանորոգվել են և ներկայումս գտնվում են լավ վիճակում՝ դառնալով նաև այլընտրանքային միջազգային ճանապարհ։ Չնայած գյուղի հարուստ պատմամշակութային ժառանգությանը՝ Կիրանցի վանք, Դեղձնուտի վանք, Սամսոնի վանք, Սրանոցի կամուրջ և այլ հուշարձաններ, դրանք տարիներ շարունակ մնացել են անուշադրության։ Վերջին շրջանում բարերարների աջակցությամբ գյուղում իրականացվում են բարեկարգման աշխատանքներ, որոնք նպաստում են զբոսաշրջային հոսքի ավելացմանը։

		Այնուամենայնիվ, անհրաժեշտ է լրացուցիչ քայլեր ձեռնարկել՝ գյուղի պատմամշակութային արժեքները ճանաչելի և հասանելի դարձնելու համար։ Առաջարկվող նախագիծը նպատակ ունի այդ խնդիրը լուծել. պատի գեղարվեստական ձևավորումը և պատմաշակույթային վայրերի մասին տեղեկությունների տրաամդրումը կբարձրացնի հետաքրքրությունը գյուղի նկատմամբ, կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և կուժեղացնի համայնքի ինքնությունը։
5	**Առաջարկի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները**	-Գյուղի կենտրոնական հատվածը կդառնա ավելի գեղագիտական և գրավիչ միջավայր՝ բնակիչների և զբոսաշրջիկների համար։ -Աճարկուտի պատմամշակութային կոթողները կներկայացվեն նոր, ստեղծագործական ձևաչափով՝ պատի գեղանկարների և նկարների կից եռալեզու(հայերեն,անգլերեն,ֆրանսերեն) տեղեկատվության միջոցով։ -Գյուղի մասին տեղեկացվածությունը կբարձրանա հարակից շրջաններում և Հայաստանում, ինչը կնպաստի զբոսաշրջիկների և այցելուների հոսքի աճին։ -Նախագիծը կնպաստի երիտասարդների և համայնքի անդամների ներգրավվածությանը՝ համայնքի գեղեցկացման և մշակութային արժեքների պահպանման գործում
6	**Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ**	**Պատի մակերեսի մաքրում / հարթեցում** - Պատի մաքրում (հին շերտից, փոշուց) , հարթեցում, ներկման հիմք - **115,500 դր**.

	ռեսուրսները	Արհեստավորի գումար - 120,000 դրամ Գեղանկարիչի աշխատանք - 1,155,000 դրամ Գունանյութեր և նյութեր- 120,000 Պաշտպանիչ լաք / շերտ- 66,000 QR էջերի պատրաստում, Տպագրություն / պատրաստում (պլաստիկ կամ մետաղյա թիթեղիկ) - 220,000 դրամ